««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (Կ-442[4]-25.11.2022-ՊԻ-011/1) նախագծի վերաբերյալ առաջարկ.

1. Նախագծի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին եւ կրտսեր կոչումները շնորհում է ծառայողին ոստիկանության համապատասխան պաշտոնին նշանակելու կամ որպես սովորող հրամանագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:».

2) 5-րդ մասը «ցմահ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով.

3) 8-րդ մասը «հիմքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված փորձաշրջանի ընթացքում» բառերը:

2. Նախագծի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

Հոդված 8. Օրենքի 5.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասում «ոստիկանության պետի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի ղեկավարի» բառերով:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Լիազոր մարմնի ղեկավարի միջնորդությունը ներկայացվում է սույն հոդվածի 2-3-րդ մասերով սահմանված պահանջներին համապատասխան:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Նախագահի կողմից ոստիկանության բարձրագույն կոչում շնորհվելու դեպքում Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությունը պետք է պարունակի սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տվյալները:»:

««Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (Կ-442[3]-25.11.2022-ՊԻ-011/1) նախագծի վերաբերյալ առաջարկ.

1. Նախագծի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 12. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա)» կետում «ռետինե» բառից առաջ լրացնել «կառավարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան» բառերը:

««Ոստիկանության զորքերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (Կ-442[8]-25.11.2022-ՊԻ-011/1) նախագծի վերաբերյալ առաջարկ.

1. Նախագծից հանել նախագծի 9-րդ հոդվածը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ներկայացված առաջարկները սկզբունքային նշանակություն ունեն իրավական համակարգի ամբողջականության պահպանման և Սահմանադրության հետ որևէ առերևույթ հակասություն բացառելու համար:

Առաջարկների փաթեթով նախատեսվում է պահպանել գեներալի կոչման շնորհումը բացառապես Նախագահի կողմից, որը բխում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 2-րդ մասից: Գեներալի կոչման շնորհման միջնորդության ներկայացման կարգավորումներում նույնպես կատարվել են վերաբերելի փոփոխություններ:

Այնուհետև՝ ոստիկանության կողմից կիրառվող մահակների առնչությամբ ըստ առաջարկների պահպանվում է «ռետինե բառը», սակայն դրան ավելացվում է «կառավարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան» եզրույթը: Ժողովրդավարական հասարակություններում պետք է ոչ միայն փաստացի, այլև իրավական մակարդակում բացառել քաղաքացու նկատմամբ որևէ ապօրինի հարկադրանքի կամ օրինական հարկադրանքի ապօրինի դրսևորմա միջոց, ինչպիսին կարող է հանդիսանալ ոչ ռետինե՝ փայտե կամ մետաղական մահակը, հետևաբար սկզբունքային նշանակություն ունի մահակի հումքի՝ ռետինե լինելու պահանջի օրենսդրական ամրապնդումը: Ընդ որում՝ այս պահանջը ամրագրված է մի շարք այլ օրենքներում: